Կ Ա Ր Ծ Ի Ք

Վռամ Վլադիմիրի Կարապետյանի «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում» թեմայով ատենախոսության, ներկայացված Ը.00.06-«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում երկրների միջև տնտեսական կապերի խորացումն արդյունք է միջազգային տնտեսական հարաբերությունների տարբեր ձևերի զարգացման, որի վճռորոշ գործոններից է աշխատանքի միջազգային բաժանումը: Աշխարհի բոլոր երկրները աշխատանքի միջազգային բաժանման համակարգում ունեն որոշակի ընդգրկվածություն, ինչը նրանց տալիս է լրացուցիչ տնտեսական աճի հնարավորություն՝ շնորհիվ արտադրության մասնագիտացման և կոոպերացման: Հաշվի առնելով հատկապես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներից ակնկալվող օգուտները՝ ակնհայտ է դառնում, որ որոշակի ապրանքների ու ծառայությունների արտադրության և դրանց փոխանակության մեջ մասնագիտացման դեպքում երկրների մասնակցությունը այս կամ այն ինտեգրացիոն խմբավորմանը ընձեռում է արտադրության արդյունավետության բարձրացման նոր հնարավորություններ, որոնք կարող են մեծանալ աշխատանքի տարածաշրջանային բաժանման խորացման արդյունքում: Այս առումով կարևորվում է ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման օգուտների իրացման մեխանիզմների ուսումնասիրությունը, ինչպես նաև ինտեգրացիոն խմբավորման և դրա անդամ երկրների տնտեսական զարգացման վրա դրանց ազդեցության գնահատումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն հանդիսանում է ԵԱՏՄ անդամ՝ խիստ կարևորվում է վերջինիս ՀՀ անդամակցության արդյունավետության բարձրացման ուղիների մատնանշումը աշխատանքի տարածաշրջանային բաժանման համատեքստում, որը թույլ կտա վեր հանել ոչ միայն ՀՀ, այլև խմբավորման անդամ մյուս երկրների արտադրական մասնագիտացման հիմնական ոլորտները և արտադրական կոոպերացման

ուղղությունները, ինչն էլ ընկած է գրախոսվող աշխատանքի ***արդիականության և հրատապության*** հիմքում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը աշխատանքի տարածաշրջանային բաժանման նախադրյալների և օրինաչափությունների ուսումնասիրության հիման վրա ԵԱՏՄ երկրների երկարաժամկետ տնտեսական աճի և մրցունակության վրա արտադրության մասնագիտացման և կոոպերացման ազդեցության բացահայտումն է: Նշված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ բացահայտել և նկարագրել այն պայմանները, որոնց շրջանակներում ընթանում է աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացը և որոնք ազդեցություն են թողնում երկրների տնտեսական աճի վրա,
- ✓ ուսումնասիրել տարբեր ինտեգրացիոն միավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման օգուտների իրացման տեսական հայեցակարգերը,
- ✓ վերհանել աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործնական հիմնախնդիրները և ԵԱՏՄ անդամ երկրների արտահանման ուև ներմուծման համակենտրոնացման/դիվերսիֆիկացման ինդեքսների վերլուծության հիման վրա բացահայտել այդ երկրների արտադրական մասնագիտացման ոլորտները և արտադրական կոոպերացման հնարավորությունները,
- ✓ ԵԱՏՄ անդամ երկրների արտաքին առևտրային հոսքերի որակական և քանակական բնութագրիչների ուսումնասիրության հիման վրա, բացահայտել դրանց ազեցությունը ինտեգրացիոն խմբավորման տնտեսական և արդյունաբերական զարգացման վրա,
- ✓ Տնտեսամաթեմատիկական մոդելի կառուցման միջոցով գնահատել ԵԱՏՄ երկրների միջև արտադրության կոոպերացման և տարածաշրջանային արժեքային շղաթների ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև բացահայտել միասնական արդյունաբերական քաղաքականության արդյունավետությունը:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ԵԱՏՄ երկրների աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացն է և դրա ազդեցությունը երկրների տնտեսական աճի վրա, իսկ առարկան՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման և երկրների միջև արտադրական կոոպերացման

պատճառահետևանքային կապերը՝ ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների տնտեսական աճի տեմպերի բարձրացման տեսանկյունից:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական ժամանակակից հետազոտություններում աշխատանքի միջազգային և տարածաշրջանային բաժանման տնտեսական հիմնադրույթները լուսաբանող գիտական հրապարակումները:

Հետազոտության ընթացքում, համակարգային մոտեցման շրջանակներում, կիրառվել են ընդհանուր գիտական հետազոտական մեթոդներ. պատմականի ու տրամաբանականի համակցում, տեսական և մաթեմատիկական մոդելավորում, վիճակագրական ու գործոնային վերլուծություն, գրաֆիկական մոդելավորում և այլն: Մեթոդական վերլուծության համար կիրառվել է նաև VAR-Vector AutoRegression մոդելը:

Ատենախոսության գործնական նշանակությունը հիմնավորելու նպատակով օգտագործվել են ԵԱՏՄ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների պաշտոնական հրապարակումները, Միջազգային առևտրի կենտրոնի, UNCTAD-ի, Երասիական տնտեսական հանձնաժողովի և այլ միջազգային կառույցների հրապարակված վիճակագրական տվյալները, տեղեկագրերը, զեկույցները, փորձագիտական գնահատականները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, այն շարադրված է 118 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը և հրատապությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ներկայացվել են ատենախոսության գիտական նորույթ պարունակող դրույթները, մատնանշվել է դրանց գործնական նշանակությունը և արդյունքների իրացումը, արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Աշխատանքի առաջին՝ **«Աշխատանքի տարածաշրջանային բաժանման տեսական հիմնադրույթները»** գլխում ներկայացվել են աշխատանքի տարածաշրջանային բաժանման վերաբերյալ մոտեցումները, դրա տնտեսագիտական բովանդակությունը, ազգային տնտեսական համակարգում աշխատանքի բաժանման, մասնագիտացման և

ինդուստրացման գործընթացների իրականացման պայմանները, երկրների բնական առանձնահատկությունների և ռեսուրսապահովվածության ազդեցությունը հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և ինտեգրացիոն խմբավորման տնտեսական աճի վրա, ինչպես նաև կատարվել է աշխատանքի տարածաշրջանային բաժանման միջազգային փորձի և առանձնահատկությունների ուսումնասիրություն:

Երկրորդ՝ **«Աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացները Եվրասիական տնտեսական միության շրջանակներում»** գլխում իրականացվել է ԵԱՏՄ երկրներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման վրա տնտեսական ինտեգրման ազդեցության մեթոդոլոգիական գնահատում՝ ԵԱՏՄ երկրների՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացների մասնակցության վիճակը և դինամիկան բնութագրող մի շարք ցուցանիշների կիրառմամբ, վերլուծվել է ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի կառուցվածը և շարժընթացը, ներկայացվել մասնագիտացման և արտահանման բազմազանեցման դերը ԵԱՏՄ երկրների արտահանման ծավալների ընդլայնման և տնտեսության զարգացման վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հեռանկարները ԵԱՏՄ երկրներում»** գլխում անդրադարձ է կատարվել արտադրության և արտահանման արդյունավետության բարձրացման վրա աշխատանքի տարածաշրջանային բաժանման ազդեցության հիմնական գործոններին, տնտեսամաթեմատիկական մոդելի միջոցով իրականացվել է ԵԱՏՄ համատեքստում ՀՀ արտադրական մասնագիտացման գնահատում, ինչպես նաև դիտարկվել է ԵԱՏՄ անդամ երկրների կոոպերատիվ համագործակցության ներուժը և ներկայացվել վերջինիս հեռանկարները:

Ատենախոսությունում կատարված վերլուծություններն ամփոփվել են **«Եզրակացություններ»** բաժնում՝ նշանակալի եզրակացություններով և առաջարկություններով:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվել է տեսագործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներում, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն հետևյալները են՝

- ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրները դասակարգվել են ըստ այն խմբերի, որոնք աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացներում՝ արտադրության արդյունավետության բարձրացման և

ինտեգրացիոն խմբավորման տնտեսական աճի վրա ազդում են ելնելով իրենց բնաշխարհագրական առանձնահատկություններից և ռեսուրսաապահովվածությունից,

- միջազգային տնտեսագիտությունում կիրառվող՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում առանձին երկրների մասնագիտացման մակարդակը գնահատող ցուցանիշների ընդհանրացման հիման վրա մշակվել է աշխատանքի ճյուղային տարածաշրջանային բաժանման գործակից, որը թույլ է տալիս գնահատել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մասնակցությունը աշխատանքի տարածաշրջանային բաժանմանը,
- կոռելացիոն ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է ԵԱՏՄ երկրների արտահանման դիվերսիֆիկացման/մասնագիտացման և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ կախվածության ցրվածքի գծապատկերը, որը թույլ է տվել բացահայտել, որ եթե ԵԱՏՄ բոլոր երկրների համար ավելի նախընտրելի է մասնագիտացման խորացումը, ապա Հայաստանը՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճի տեսանկյունից ունի արտահանման դիվերսիֆիկացման քաղաքականության որդեգրման կարիք,
- VAR -Vector AutoRegression մոդելի օգտագործման միջոցով իրականացվել է ԵԱՏՄ երկրների արդյունաբերության ծավալների ցնցումների վերլուծություն, որը թույլ է տվել բացահայտել հետևյալ օրինաչափությունը. եթե նախկինում ներքին պահանջարկի բավարարման համար ՀՀ-ն ավելացնում էր արդյունաբերական արտադրանքի ներմուծումը ՌԴ-ից, ապա այժմ այդ արտադրանքը արտադրվում է ազգային տնտեսության շրջանակներում, ինչը բացասաբար է ազդում ՌԴ, հետևաբար և ԵԱՏՄ արդյունաբերության ծավալների աճի վրա:

Ատենախոսությունում ստացված՝ ինտեգրացիոն խմբավորումների տնտեսական աճի տեմպերի վրա դրանց ազդեցությունների գնահատման քանակական և որակական վերլուծությունների արդյունքները կարող են ունենալ **տեսագործնական նշանակություն,** իսկ աշխատանքի տարածաշրջանային բաժանման միջպետական կարգավորման և տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորման հայեցակարգային մոտեցումները հետագայում կարող են հիմք հանդիսանալ առավել խորը տեսագործնական վերլուծության համար: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառական նշանակություն ունենալ տվյալ հիմնախնդիրն ուսումնասիրող

ակադեմիական շրջանակների, պետական կառավարման մարմինների համապատասխան մասնագետների և այլ անձանց համար:

Միևնույն ժամանակ ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները զերծ չեն **թերություններից**: Դրանք են՝

1. Հետազոտության առաջին նորույթի շրջանակներում հեղինակն իրականացրել է տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների դասակարգում ըստ խմբերի, որոնք բնաշխարհագրական առանձնահատկություններով և ռեսուրսաապահովվածությամբ պայմանավորված՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացներում իրենց ազդեցությունն են թողնում արտադրության արդյունավետության բարձրացման և խմբավորման տնտեսական աճի վրա: Այդ համատեքստում մատնանշվել են վերջինիս ապահովման համար անհրաժեշտ հիմնական ռեսուրսները և ներկայացվել դրանց շարժունակության դերը այդ գործընթացների արդյունավետության մակարդակի բարձրացման գործում (էջ 21-23): Ինչ խոսք, նշված գործոնները կարևոր և առանցքային դեր ունեն ցանկացած ինտեգրացիոն խմբավորման տնտեսական զարգացման համար: Սակայն հարկ է նկատել, որ դրանք աշխատանքային միջազգային բաժանման արդյունավետությունն ապահովող համընդհանուր պայմաններ են, որոնք գործում են նաև այլ տնտեսական միավորների (տարածաշրջան, ինտեգրացիոն խմբավորում և այլն) դեպքում: Ուստի կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլիներ, որ հեղինակն առանձնացներ և դիտարկեր այն գործոնները, որոնք արտադրության արդյունավետության բարձրացման և տնտեսական աճի վրա ազդեցության տեսանկյունից ներհատուկ են հատկապես տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներին:
2. Ատենախոսության 2.2 բաժնում ուսումնասիրելով ԵԱՏՄ երկրների արտաքին և փոխադարձ առևտրի կառուցվածքը և շարժընթացը՝ հեղինակը մատնանշել է, որ «ԵԱՏՄ անդամ երկրների մեծ մասն ավելի սերտ առևտրային հարաբերություններով կապված է երրորդ, այլ ոչ ԵԱՏՄ գործընկերների հետ» (էջ 50): Անշուշտ, կատարված համալիր վերլուծության արդյունքում հեղինակը վեր է հանել այն ոլորտները, որոնք ունեն մասնագիտացման և կոոպերացման մեծ ներուժ և հնարավորություններ՝ տնտեսական ինտեգրման խորացման և փոխադարձ առևտրի ընդլայնման տեսանկյունից: Սակայն կարծում ենք, որ կատարված

ուսումնասիրությունն ամբողջական կլիներ, եթե առավել համակարգված և հանգամանալից ներկայացվեին այն ուղիներն ու մեխանիզմները, որոնց մշակմամբ ու հետագա կիրառմամբ հնարավոր կլինի փոխել արտաքին և փոխադարձ առևտրի ծավալների համամասնությունը՝ հօգուտ ԵԱՏՄ շրջանակներում տարածաշրջանային առևտրի ընդլայնման:

3. Ատենախոսության 2.3 բաժնում իրականացված կոռելացիոն ռեգրեսիոն վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ «եթե ԵԱՏՄ բոլոր երկրների համար ավելի նախընտրելի է մասնագիտացման խորացումը, ապա Հայաստանը՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճի տեսանկյունից ունի արտահանման դիվերսիֆիկացման քաղաքականության որդեգրման կարիք» (էջ 76): Վեր հանելով ԵԱՏՄ առանձին երկրների մասնագիտացման ներուժային ոլորտներն ու արտահանման կարևոր ուղղությունները՝ հեղինակը, սակայն, հաշվի չի առել ներկայումս Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տնտեսական սահմանափակումների համատեքստում մասնագիտացման խորացման հնարավորությունների հեռանկարները, մանավանդ, որ արդյունավետ տարածաշրջանային մասնագիտացմանը նպաստում են նաև օտարերկրյա կապիտալ ներդրումները, առանց որոնց հնարավոր չէ կատարելագործել արտադրության տեխնիկական բազան և դուրս գալ արտաքին շուկաներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները, սակայն նախընտրելի է, որ դրանք հեղինակի կողմից հաշվի առնվեն հետագա գիտական ուսումնասիրությունների ընթացքում:

Վռամ Վլադիմիրի Կարապետյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական և գործնական կարևոր նշանակություն, այն ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում մշակված մոտեցումներն ունեն ԵԱՏՄ շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները բացահայտելու կարևոր նշանակություն: Ակնհայտ է, որ իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ, ինչը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ

հիմնավորվածություն և հավաստիություն:

Կատարված համապարփակ վերլուծությունը և դրա հիման վրա ներկայացված առաջարկությունները միտված են ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում աշխատանքի բաժանման արդյունավետության բարձրացմանը և անդամ երկրների միջև տնտեսական համագործակցության ակտիվացմանը:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի 6 գիտական հոդվածներում, իսկ արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնում և մի շարք գիտաժողովներում:

Վռամ Վլադիմիրի Կարապետյանի «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող այլ պահանջներին, ուստի հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մ.Ա. Ավագյան

Մ.Ա. Ավագյանի ստորագրությունը հաստատում ե
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Աշխատակազմի ղեկավարի տ/պ Մ.Ս. Հայրապետյան

25.10.2022թ.